Գործի որոշում 2021-005-FB-UA

Գործի ամփոփագիր

Վերստուգիչ խորհուրդը չեղյալ է համարել մեկնաբանությունը հեռացնելու մասին Facebook-ի որոշումը՝ համաձայն իր Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի: Խորհրդի անդամների մեծամասնությունը եկավ այն եզրակացության, որ մեկնաբանությունն ընկնում է Facebook-ի բացառության մեջ, որով թույլատրվում է այնպիսի բովանդակություն, որը դատապարտում կամ բարձրացնում է իրազեկվածությունն ատելության մասին:

Գործի մասին

2020 թվականի դեկտեմբերի 24-ին ԱՄՆ-ում բնակվող Facebook-ի մի օգտատեր մեկնաբանություն էր հրապարակել «ամենօրյա պայքար» կամ «երկու կոճակ» մեմերի ադապտացված ձևով: Այնտեղ ներկայացված էր տրոհված էկրանով մուլտֆիլմ բնօրինակ «երկու կոճակ» մեմից, որտեղ մուլտֆիլմի հերոսի դեմքը փոխարինված էր թուրքական դրոշով: Մուլտֆիլմի հերոսի աջ ձեռքն իր գլխին էր և, կարծես, քրտնում էր: Հերոսի վերևի մասում՝ տրոհված էկրանի երկրորդ կեսում, երկու կարմիր կոճակ կա, որոնց վրա անգլերենով համապատասխանաբար հայտարարություններ են գրված. «Հայոց ցեղասպանությունը սուտ է» և «Հայերը ահաբեկիչներ էին և նրանք արժանի էին դրան»:

Մինչ բովանդակության մի մոդերատորը գտնում էր, որ մեմը խախտում էր Facebook-ի Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտը, մյուսը գտնում էր, որ այն խախտում էր Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտը: Facebook-ը հեռացրել էր մեկնաբանությունը՝ համաձայն Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտի և տեղեկացրել էր օգտատիրոջը դրա մասին:

Սակայն օգտատիրոջ բողոքարկումից հետո Facebook-ը համարեց, որ բովանդակությունը պետք է հեռացվի՝ համաձայն իր Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի: Ընկերությունը չտեղեկացրեց օգտատիրոջը, որ հաստատել է իր որոշումը այլ Համայնքային ստանդարտի համաձայն:

Ուսումնասիրության հիմնական արդյունքները

Facebook-ը հայտարարեց, որ հեռացրել էր մեկնաբանությունը, քանի որ «Հայերն ահաբեկիչներ էին և նրանք արժանի էին դրան» արտահայտության մեջ պնդումներ կային, որ հայերը հանցագործներ էին՝ ելնելով իրենց ազգային և էթնիկական պատկանելությունից: Համաձայն Facebook-ի՝ դա խախտում էր իր Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտը:

Facebook-ը նաև նշել է, որ մեմը չէր մտնում այն բացառության մեջ, որը թույլ է տալիս օգտատերերին կիսվել ատելություն պարունակող բովանդակությամբ՝ այն դատապարտելու կամ իրազեկվածությունը բարձրացնելու համար: Ընկերությունը պնդում էր, որ մուլտֆիլմի հերոսը կարող էր ողջամտորեն դիտարկվել որպես մեմում ներկայացված երկու հայտարարությունները ինչպես դատապարտող, այնպես էլ ընդունող:

Խորհրդի անդամների մեծ մասը, սակայն, կարծում էր, որ բովանդակությունն ընկնում էր բացառության մեջ: «Երկու կոճակ» մեմը հակադրում է երկու տարբեր տարբերակներ՝ ոչ թե նրանց աջակցություն ցուցաբերելու համար, այլ հնարավոր հակասությունները ընդգծելու համար: Այսպիսով, նրանք գտան, որ օգտատերը կիսվել է մեմով, որպեսզի ուշադրություն հրավիրի և դատապարտի Թուրքիայի կառավարության ջանքերը՝ ժխտելու հայոց ցեղասպանությունը և, միևնույն ժամանակ, արդարացնելու այդ պատմական ոճրագործությունները: Շատերը կատարել էր հանրային մեկնաբանություն, որտեղ ասվում է, որ մեմը «չի ծաղրում ցեղասպանության զոհերին, այլ ծաղրում է ժամանակակից Թուրքիային հատուկ ժխտողականությունը, որը միաժամանակ ասում է, որ ցեղասպանություն չի եղել, և որ զոհերն արժանի են դրան»: Շատերը նաև

կարծում էին, որ բովանդակությունը կարող էր ընկնել Facebook-ի երգիծական բովանդակության բացառության տակ, որը ներառված չէ Համայնքային ստանդարտներում:

Այնուամենայնիվ, Խորհրդի փոքրամասնությունը գտավ, որ բավարար չափով պարզ չէր, որ օգտատերը կիսվել էր բովանդակությամբ՝ Թուրքիայի կառավարությանը քննադատելու համար: Քանի որ բովանդակությունը պարունակում էր վնասակար ընդհանրացումներ հայերի վերաբերյալ, Խորհրդի անդամների փոքրամասնությունը գտնում էր, որ այն խախտում էր Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտը:

Այս դեպքում, Խորհուրդը նշեց, որ Facebook-ը տեղեկացրել էր օգտատիրոջը, որ նա խախտել էր Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտը, այն դեպքում, երբ ընկերության գործողությունները հիմնված են եղել Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի վրա: Խորհուրդը մտահոգված էր նաև այն հարցով, թե արդյոք Facebook-ի մոդերատորները ժամանակ և ռեսուրսներ են ունեցել՝ ստուգելու երգիծական բովանդակությունը:

Վերստուգիչ խորհրդի որոշումը

Վերստուգիչ խորհուրդը չեղյալ է համարում բովանդակությունը հեռացնելու Facebook-ի որոշումը և պահանջում է, որ մեկնաբանությունը վերականգնվի:

Քաղաքականության վերաբերյալ խորհուրդների հայտարարության մեջ Խորհուրդն առաջարկում է Facebook-ին.

- Տեղեկացնել օգտատերերին ընկերության կողմից սահմանված Համայնքային ստանդարտի մասին: Եթե Facebook-ը որոշում է, որ օգտատիրոջ բովանդակությունը խախտում է այլ համայնքային ստանդարտ, և ոչ թե այն, որի մասին ի սկզբանե հայտնել են օգտատիրոջը, նա պետք է բողոքարկման մեկ այլ հնարավորություն ունենա:

- Ներառել երգիծական բովանդակության բացառությունը, որը ներկայումս հասանելի չէ օգտատերերին, Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի հանրային լեզվում:
- Ընդունել երգիծական բովանդակությունը պատշաճ կերպով կառավարելու ընթացակարգեր՝ հաշվի առնելով համապատասխան ենթատեքստը: Սրա մեջ մտնում է նաև բովանդակության մոդերատորներին Facebook-ի տեղական աշխատանքային խմբերի հետ հաղորդակցվելու թույլտվության իրավունքը և բավարար ժամանակ տրամադրելը՝ այդ խմբերի հետ խորհրդակցելու և գնահատական տալու համար:
- Թույլ տալ օգտատերերին իրենց բողոքարկման մեջ նշել, որ իրենց բովանդակությունն ընկնում է Ատելության խոսքի վերաբերյալ քաղաքականության բացառություններից մեկի մեջ: Սա ներառում է երգիծական բովանդակության բացառությունները և, երբ օգտատերերը կիսվում են ատելություն պարունակող բովանդակությամբ՝ այն դատապարտելու կամ իրազեկվածությունը բարձրացնելու համար:
- Համոզվել, որ քաղաքականությունների բացառությունների վրա հիմնված բողոքարկումներն ունեն մարդկանց կողմից ստուգվելու առաջնահերթություն:

*Գործի ամփոփագրերը ներկայացնում են գործի ընդհանուր նկարագրությունը և նախադեպային արժեք չունեն:

<u>Գործի վերաբերյալ ամբողջական որոշումը</u>

1. Որոշման ամփոփագիր

Վերստուգիչ խորհուրդը չեղյալ է համարել բովանդակությունը հեռացնելու մասին Facebook-ի որոշումը՝ համաձայն իր Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի: Խորհրդի անդամների մեծամասնությունը եկավ այն եզրակացության, որ երգիծական մեմի ձևով ներկայացված մուլտֆիլմն ընկնում է ատելությունը դատապարտող կամ դրա իրազեկվածությունը

բարձրացնող բովանդակության համար նախատեսված Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի բացառության մեջ:

2. Գործի նկարագրություն

2020 թվականի դեկտեմբերի 24-ին ԱՄՆ-ում բնակվող Facebook-ի մի օգտատեր մեկնաբանություն էր հրապարակել «ամենօրյա պայքար» կամ «երկու կոճակ» մեմերի ադապտացված ձևով: Մեմը մեդիայի տեսակ է, որը հաճախ կրում է հումորային բնույթ և արագ տարածվում է համացանցում: Այնտեղ ներկայացված էր տրոհված էկրանով մուլտֆիլմ բնօրինակ մեմից, որտեղ մուլտֆիլմի հերոսի դեմքը փոխարինված էր թուրքական դրոշով: Մուլտֆիլմի հերոսի աջ ձեռքն իր գլխին էր և, կարծես, քրտնում էր: Հերոսի վերևի մասում՝ տրոհված էկրանի մյուս կեսում, երկու կարմիր կոճակ կա, որոնց վրա անգլերենով համապատասխանաբար հայտարարություններ են գրված. «Հայոց ցեղասպանությունը սուտ է» և «Հայերը ահաբեկիչներ էին և նրանք արժանի էին դրան»: Մեմին նախորդում էր «մտածող դեմք» էմոջի:

Մեկնաբանությունը տեղադրվել էր Facebook-ի հանրային էջում, որը բնութագրվում է որպես աշխարհիկ տեսանկյունից կրոնական խնդիրները քննարկելու համար նախատեսված ֆորում: Այն մի հրապարակման պատասխանն էր, որտեղ պատկերված էր նիկաբով մի մարդու նկար, որի վրա անգլերենով տեքստ էր գրված. «Ոչ բոլոր բանտարկյալներն են ճաղերի հետևում»: Մեկնաբանությունը հեռացնելու պահին այն սկզբնական հրապարակումը, որին այն պատասխանել էր, 260 դիտում էր ունեցել, 423 արձագանք և 149 մեկնաբանություն: Շրի Լանկայում բնակվող Facebook-ի մի օգտատեր հայտնել էր, որ մեկնաբանությունը խախտում է Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտը:

2020 թվականի դեկտեմբերի 24-ին Facebook-ը հեռացրեց մեմը: Կարճ ժամանակահատվածում երկու մոդերատորներ ստուգեցին մեկնաբանությունը ընկերության քաղաքականության համաձայն և եկան տարբեր եզրահանգումների: Մինչ առաջին մոդերատորը եզրակացնում էր, որ մեմը խախտում էր Facebook-ի Ատելության խոսքի վերաբերյալ քաղաքականությունը,

երկրորդը գտնում էր, որ այն խախտում էր Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ քաղաքականությունը: Երկրորդ ստուգման հիման վրա բովանդակությունը հեռացվեց և գրանցվեց Facebook-ի համակարգերում: Դրա հիման վրա Facebook-ը տեղեկացրեց օգտատիրոջը, որ նրա մեկնաբանությունը «հակասում է դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ մեր Համայնքային ստանդարտին»:

Օգտատիրոջ բողոքարկումից հետո Facebook-ը չեղարկեց իր որոշումը, բայց գտավ, որ բովանդակությունը պետք է հեռացվեր՝ համաձայն իր Ատելության խոսքի վերաբերյալ քաղաքականության: Ըստ Facebook-ի՝ «Հայերը ահաբեկիչներ էին և նրանք արժանի էին դրան» արտահայտությունը մասնավորապես խախտում է այնպիսի բովանդակության վրա դրված արգելքը, որտեղ ասվում է, որ պաշտպանված հատկանիշով բոլոր անդամները հանցագործներ են, այդ թվում նաև՝ ահաբեկիչներ: Բովանդակության ոչ մի այլ մաս, ինչպիսին այն պնդումն է, որ հայոց ցեղասպանությունը սուտ է, չի համարվել կանոնները խախտող: Facebook-ը չի տեղեկացրել օգտատիրոջը, որ այն հաստատել է բովանդակությունը հեռացնելու մասին որոշումը այլ Համայնքային ստանդարտի համաձայն:

Օգտատերը 2020 թվականի դեկտեմբերի 24-ին բողոքարկում է ներկայացրել Վերստուգիչ խորհրդին:

Վերջապես, այս որոշման մեջ Խորհուրդը ցեղասպանություն է անվանել այն ոճրագործությունները, որոնք կատարվել էին հայ ժողովրդի նկատմամբ 1915 թվականից ի վեր, քանի որ այս տերմինը սովորաբար օգտագործվում է հայերի կոտորածներն ու զանգվածային տեղահանությունները նկարագրելու համար, ինչպես նաև հիշատակվում է քննարկվող բովանդակության մեջ: Խորհուրդն իրավասություն չունի օրինականորեն որակելու նման վայրագությունները, և այդ որակումն այս վճռի առարկան չէ:

3. Լիազորություններ և իրավասությունների շրջանակ

Խորհուրդն իրավունք ունի վերանայել Facebook-ի որոշումը՝ օգտատիրոջ բողոքարկման հիման վրա, ում հրապարակումը հեռացվել է (Կանոնադրության հոդված 2, Բաժին 1, Օրենսդրական ակտի հոդված 2, Բաժին 2.1): Խորհուրդը կարող է ուժի մեջ թողնել կամ չեղյալ համարել այդ որոշումը (Կանոնադրության հոդված 3, Բաժին 5): Խորհրդի որոշումները պարտադիր ուժ ունեն և կարող են ներառել քաղաքականության վերաբերյալ խորհուրդների հայտարարություններ՝ առաջարկություններով: Այս առաջարկները պարտադիր չեն, բայց Facebook-ը պետք է պատասխանի դրանց (Կանոնադրության հոդված 3, Բաժին 4): Խորհուրդը բողոքարկման անկախ մեխանիզմ է, որը վեճերը լուծում է թափանցիկ և սկզբունքային եղանակով:

4. Համապատասխան ստանդարտներ

Վերստուգիչ խորհուրդն իր որոշման մեջ հաշվի է առել հետևյալ ստանդարտները.

I. Facebook-ի Համայնքային ստանդարտները

Facebook-ի Համայնքային ստանդարտներով ատելության խոսքը սահմանվում է որպես «ուղղակի հարձակում մարդկանց վրա, որը հիմնված է այն բանի վրա, ինչը մենք անվանում ենք պաշտպանված հատկանիշներ՝ ռասա, էթնիկ պատկանելություն, ազգային ծագում, կրոն, սեռական կողմնորոշում, կաստա, սեռ, գենդեր, գենդերային ինքնություն և լուրջ հիվանդություն կամ հաշմանդամություն»: «Մակարդակ 1»-ի շրջանակներում արգելված բովանդակության («չհրապարակել») մեջ մտնում է անձին կամ մարդկանց խմբին ուղղված բովանդակությունը՝ պաշտպանված հատկանիշի հիման վրա.

- «արժանապատվությունը նսեմացնող խոսքը կամ պատկերները համեմատության, ընդհանրացումների կամ վարվելակերպի ոչ պատշաճ հայտարարությունների տեսքով (գրավոր կամ տեսողական տեսքով) […] հանցագործների դեմ կամ նրանց մասին (ներառյալ, բայց չսահմանափակվելով «գողեր», «բանկ թալանողներ» կամ, այսպես ասած,

«Բոլոր [պաշտպանված հատկանիշ կամ մասամբ պաշտպանված հատկանիշ] «հանցագործներ» են)»:

- խոսքը, որը «[ծ]աղրում է ատելության հանցագործությունների գաղափարը, իրադարձությունները կամ զոհերին, նույնիսկ եթե նկարում իրական անձնավորություն պատկերված չէ»:

- խոսքը, որը «[մ]երժում կամ աղավաղում է Հոլոքոստի մասին տեղեկատվությունը»:

Այնուամենայնիվ, Facebook-ը թույլ է տալիս «այլ անձի ատելության խոսք պարունակող բովանդակությունը՝ այն դատապարտելու կամ իրազեկելու նպատակով»: Համաձայն Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի քաղաքականության հիմնավորման՝ «այն արտահայտությունները, որոնք հակառակ դեպքում կարող են խախտել մեր ստանդարտները, կարող են օգտագործվել ինքնահղման կամ իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման նպատակով: Մեր քաղաքականությունը մշակված է այնպես, որ խոսքի այս տեսակները տեղ ունենան, բայց մենք պահանջում ենք, որպեսզի մարդիկ հստակ նշեն իրենց մտադրությունը: Եթե մտադրությունը հստակ չէ, մենք կարող ենք հեռացնել բովանդակությունը»:

Բացի այդ, Խորհուրդը նշել է Facebook-ի Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտի մասին, որն արգելում է բովանդակությունը, որն ուղղված է «լուրջ ֆիզիկական կամ հուզական վնասներ կրած զոհերին», այդ թվում նաև՝ «[…] զոհերին ծաղրելու փորձեր, որոնցից շատերը մեմերի և GIF-երի տեսքով են»: Այս քաղաքականությունն արգելում է բովանդակությունը («չհրապարակել»), որը «պարունակում է սադիստական դիտողություններ և ցանկացած տեսողական կամ գրավոր պատկերումներ վաղաժամ մահվան ենթարկված իրական մարդկանց վերաբերյալ»:

II. Facebook-ի արժեքները

Facebook-ի արժեքները նկարագրված են Համայնքային ստանդարտների ներածության մեջ: «Ձայնի իրավունքը» նկարագրված է որպես «բարձրագույն».

> *Համայնքի ստանդարտների մշտական նպատակն է՝ ստեղծել վայր, որտեղ մարդիկ կարող են արտահայտվել, և տալ նրանց ձայնի իրավունք: […] Մենք ուզում ենք, որ մարդիկ բացահայտ խոսեն իրենց համար կարևոր թեմաների շուրջ, նույնիսկ եթե ոմանք չհամաձայնվեն կամ վիճելի համարեն նրանց կարծիքը:*

Facebook-ը սահմանափակում է «Ձայնի իրավունքը» հանուն չորս արժեքների, որոնցից երկուսը ակտուալ են այստեղ.

> «Անվտանգություն»՝ *Մեր հանձնառությունն է Facebook-ն ապահով հարթակ դարձնել: Արտահայտությունները, որոնք սպառնում են մարդկանց և կարող են վախեցնել, բացառել կամ լռեցնել նրանց, թույլատրված չեն Facebook-ում:*
>
> «Արժանապատվություն»՝ *Մենք հավատում ենք, որ բոլոր մարդիկ հավասար են արժանապատվության և իրավունքների հարցում: Մենք ակնկալում ենք, որ մարդիկ կհարգեն մյուսների արժանապատվությունը և չեն նվաստացնի կամ անհանգստացնի մյուսներին:*

III. Մարդու իրավունքներին առնչվող ստանդարտներ

2011 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից հավանության արժանացած ՄԱԿ-ի՝ ձեռնարկությունների և մարդու իրավունքների առաջնորդման սկզբունքները (UNGPs), կամավոր հիմք են ստեղծում մասնավոր ձեռնարկությունների մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ: 2021 թվականին Facebook-ը հայտարարեց իր Մարդու իրավունքների կորպորատիվ քաղաքականության մասին, որտեղ այն պարտավորվել է հարգել իրավունքները UNGP-ի սկզբունքների համաձայն: Այս գործի վերաբերյալ

Խորհրդի կողմից անցկացված վերլուծությունը հիմնված էր մարդու իրավունքների հետևյալ ստանդարտների վրա.

a. Ազատ արտահայտման իրավունք. Հոդված 19, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ICCPR), Ընդհանուր մեկնաբանություն № 34, Մարդու իրավունքների կոմիտե, 2011, Կարծիք ունենալու և այն ազատ արտահայտելու իրավունքի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցներ՝ A/HRC/35/22/Add.3 (2017), A/HRC/41/35/Add.2 (2019), A/HRC/38/35 (2018), A/74/486 (2019), և A/HRC/44/49/Add.2 (2020); Ռաբաթի գործողությունների պլան, OHCHR, (2013):
b. Խտրականության չենթարկվելու իրավունք. ICCPR-ի Հոդված 2-ի 1, ICCPR, Հոդվածներ 1 և 2, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (CERD):
c. Արդարադատության հասանելիության համատեքստում տեղեկացված լինելու իրավունք. ICCPR-ի Հոդված 14-ի 3(ա) կետ, ICCPR, Ընդհանուր մեկնաբանություն № 32, Մարդու իրավունքների կոմիտե, (2007):

5. Օգտատիրոջ պնդումը

Օգտատերը Խորհրդին ուղղված դիմումում նշել է, որ «պատմական իրադարձությունները չպետք է գրաքննության ենթարկվեն»: Նա նշել է, որ իր մեկնաբանությունը նպատակ ուներ ոչ թե վիրավորելու, այլ «որոշակի պատմական իրադարձության վերաբերյալ հեգնանքով» արտահայտվելու: Օգտատերը նշել է, որ «միգուցե Facebook-ը դա սխալմամբ մեկնաբանել է որպես հարձակում»: Օգտատերը նաև նշել է, որ եթե նույնիսկ բովանդակության մեջ հիշատակվում են «կրոն և պատերազմ» բառերը, դա չի նշանակում, որ դրանք «սուր քննադատության» պետք է արժանանան: Օգտատերը գտնում է, որ Facebook-ը և նրա քաղաքականությունը չափազանց սահմանափակող են և պնդում է, որ «հումորը, ինչպես և շատ բաներ, սուբյեկտիվ է, և մեկի համար վիրավորական թվացող բանը կարող է ծիծաղելի լինել մյուսի համար»:

6. Facebook-ի որոշման բացատրություն

Facebook-ը բացատրել է, որ հեռացրել է մեկնաբանությունը որպես 1-ին աստիճանի հարձակում՝ Ատելության խոսքի համայնքային ստանդարտի համաձայն, մասնավորապես, խախտելու համար իր քաղաքականությունը, որով արգելվում է բովանդակությունը, որտեղ շեշտվում է, որ պաշտպանված հատկանիշով բոլոր անդամները հանցագործներ են, այդ թվում՝ ահաբեկիչներ: Ըստ Facebook-ի՝ թեև մեմի «Հայոց ցեղասպանությունը սուտ է» առաջին պնդումը բացասական ընդհանրացում է, այն ուղղակիորեն հարձակում չէ հայերի նկատմամբ և հետևաբար ընկերության համայնքային ստանդարտների խախտում չէ: Facebook-ը գտել է, որ երկրորդ պնդումը՝ «Հայերը ահաբեկիչներ էին և նրանք արժանի էին դրան», ուղղակի հարձակում է հայերի նկատմամբ, որտեղ շեշտվում է, որ նրանք հանցագործներ են՝ ելնելով իրենց էթնիկ և ազգային պատկանելությունից: Դա խախտում է ընկերության Ատելության խոսքի քաղաքականությունը:

Որպես իր որոշման հիմնավորում՝ Facebook-ը գնահատել է, թե արդյոք տվյալ դեպքում ատելության խոսք պարունակող բովանդակությունը պետք է դիտարկվի որպես բացառություն, քանի որ ուղղված է եղել դրա դատապարտմանը կամ դրա վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Facebook-ը պնդում է, որ մեմը չի ընկնում բացառման կատեգորիայի մեջ, քանի որ օգտատերը պարզ չի արտահայտվել, որ մտադիր է դատապարտել ատելության խոսքը: Մասնավորապես, Facebook-ը Խորհրդին բացատրել է, որ մեմում առկա քրտնած ծաղրանկարի կերպարը կարող է ողջամտորեն դիտարկվել որպես մեմում ներկայացված երկու պնդումները ինչպես դատապարտող, այնպես էլ ընդունող: Facebook-ը նաև բացատրել է, որ Ատելության խոսքի իր քաղաքականությունը նախկինում բացառում էր հումորային նյութերը: Ընկերությունը պարզաբանել է, որ վերացրել է այդ բացառումը՝ համաձայն Քաղաքացիական իրավունքների աուդիտի զեկույցի (հուլիս 2020) և որպես իր քաղաքականության զարգացման մաս: Facebook-ը Խորհրդին ուղղված իր պատասխանում նշել է, որ «Facebook-ը չի ստեղծել սահմանում, թե ինչն է համարվում ծիծաղելի՝ լայն կիրառման համար»: Այնուամենայնիվ, Քաղաքացիական իրավունքների աուդիտի զեկույցում ընկերությունը նշել է, որ Facebook-ը նեղացրել է բացառման ընդգրկույթը

երգիծական բովանդակության համար, որը «ներառում է հեգնանք, չափազանցություն, ծաղր և/կամ աբսուրդ՝ մարդկանց, նրանց վարքագիծը կամ արտահայտած տեսակետները բացահայտելու կամ քննադատելու նպատակով, մասնավորապես՝ քաղաքական, կրոնական կամ սոցիալական հարցերի համատեքստում: Դրա նպատակն է ուշադրություն հրավիրել և քննադատությամբ հանդես գալ սոցիալական ավելի լայն խնդիրների վերաբերյալ»: Այս բացառումը ներառված չէ իր համայնքային ստանդարտներում: Ըստ էության, այն տարբերվում է բացառման ենթակա բովանդակությունից, որը ներառում է ատելության խոսք՝ այն դատապարտելու կամ իրազեկվածությունը բարձրացնելու համար:

Facebook-ը նաև պարզաբանել է, որ բովանդակությունը չի խախտում Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ քաղաքականությունը, որն արգելում է «զոհերին ծաղրելու բացահայտ փորձերը»՝ այդ թվում նաև մեմերի միջոցով, քանի որ այնտեղ իրական զոհ պատկերված չէ կամ նրա անունը չի տրվում:

Facebook-ը նաև նշել է, որ բովանդակության հեռացումը համապատասխանում է «Արժանապատվության» և «Անվտանգության» իր արժեքներին և համարժեք է «Ձայնի իրավունքին»: Ըստ Facebook-ի՝ բովանդակությունը, որտեղ հայ ժողովրդին ահաբեկիչ են անվանում, «ոտնձգություն է նրա արժանապատվության նկատմամբ, կարող է ընկալվել որպես նվաստացուցիչ կամ անմարդկային, և նույնիսկ կարող է սոցիալական ցանցից դուրս հետապնդման և բռնության ռիսկեր ստեղծել»:

Facebook-ը պնդում է, որ իր որոշումը համապատասխանում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Facebook-ը նշել է, որ (ա) իր քաղաքականությունը «հեշտ հասանելի է» համայնքային ստանդարտներում, բ) բովանդակությունը հեռացնելու որոշումը օրինական է, որն ուղղված է «ուրիշների իրավունքները խախտելուց և խտրականությունից» պաշտպանելուն, և գ) բովանդակությունը հեռացնելու մասին որոշումը «անհրաժեշտ և համաչափ է՝ հայերին հասցված վնասը սահմանափակելու համար»: Որպեսզի ազատ արտահայտման սահմանափակումները համաչափ

լինեն, Facebook-ը նշել է, որ իր ատելության խոսքի քաղաքականությունը տարածվում է «ընդհանրացումների նեղ շրջանակի վրա»:

7. Երրորդ կողմից ստացված մեկնաբանություններ

Վերստուգիչ խորհուրդը ստացել է դեպքին առնչվող 23 հրապարակային մեկնաբանություն: Մեկնաբանություններից չորսը Եվրոպայից էին, մեկը՝ Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Աֆրիկայից, 18-ը՝ ԱՄՆ-ից և Կանադայից:

Խորհուրդը ստացել է մեկնաբանություններ անմիջականորեն այս հարցին առնչվող կողմերից: Դրանց մեջ կային Հայոց ցեղասպանության զոհերի հետնորդ, կազմակերպություններ, որոնք ուսումնասիրում են ցեղասպանության բնույթը, պատճառներն ու հետևանքները, ինչպես նաև բովանդակության նախկին մոդերատոր:

Ներկայացված մեկնաբանություններում արծարծվում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ որն է օգտատիրոջ կողմից կիրառված «ամենօրյա պայքար» կամ «երկու կոճակ» մեմերի իմաստն ու նշանակությունը, արդյոք բովանդակությունը նախատեսված է Թուրքիայի կառավարության և նրա կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքական քննադատության համար, արդյոք բովանդակությունը ծաղրում է Հայոց ցեղասպանության զոհերին, և ինչպիսին են Facebook-ի Ատելության խոսքի և Դաժան ու բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտները այս դեպքի հետ կապված:

Այս գործի հետ կապված հրապարակային մեկնաբանությունները կարդալու համար սեղմեք այստեղ:

8. Վերստուգիչ խորհրդի վերլուծությունը

Խորհուրդը քննել է այս հարցը, թե արդյոք բովանդակությունը պետք է վերականգնվի՝ ըստ երեք չափանիշների՝ Facebook-ի Համայնքային ստանդարտների, ընկերության արժեքների և մարդու իրավունքների առնչությամբ իր պարտավորությունների:

8.1 Համայնքային ստանդարտներին համապատասխանությունը

Խորհուրդը վերլուծել է երկու պնդումներից յուրաքանչյուրը՝ ըստ Facebook-ի Համայնքային ստանդարտներին՝ նախքան այդ պնդումների համադրության ազդեցության ուսումնասիրությունը «ամենօրյա պայքար» կամ «երկու կոճակ» մեմի այս տարբերակում:

8.1.1. «Հայոց ցեղասպանությունը սուտ է» պնդման վերլուծություն

Խորհուրդը նշել է, որ Facebook-ը չի գտել, որ այս պնդումը խախտում է Ատելության խոսքի համայնքային ստանդարտը: Facebook-ը կիրառում է Ատելության խոսքի համայնքային ստանդարտը՝ (i) «անմիջական հարձակման» և (ii) «պաշտպանված հատկանիշով» անմիջական հարձակման ենթարկվելու դեպքում: Քաղաքականության հիմնավորման մեջ «արժանապատվությունը նսեմացնող խոսքը» բերված է որպես հարձակման օրինակ: Էթնիկ և ազգային պատկանելությունը ներառված են պաշտպանված հատկանիշների ցանկում:

Ատելության խոսքի քաղաքականության «չհրապարակել» բաժնում Facebook-ն արգելում է «ծաղրել ատելության հողի վրա կատարված հանցագործությունները, իրադարձությունները կամ զոհերին, նույնիսկ եթե պատկերի մեջ որևէ իրական անձ չի ներկայացված»: Խորհրդի մեծամասնությունը, սակայն, նշել է, որ օգտատերը նպատակ ուներ ոչ թե ծաղրել պնդման մեջ նշված իրադարձությունների զոհերին, այլ մեմի օգնությամբ՝ երգիծանքի ձևով քննադատության ենթարկել հենց պնդումը: Փոքրամասնության կարծիքով օգտատիրոջ նպատակն այնքան էլ պարզ չէր: Օգտատերը կարող էր կիսված լինել բովանդակությամբ՝ պնդումն ընդունելու նպատակով, այլ ոչ թե հերքելու:

Այս դեպքում Facebook-ը զգուշացրել էր օգտատիրոջը, որ իր բովանդակությունը հակասում է Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտին: Այս քաղաքականության համաձայն՝ Facebook-ն արգելում է «ֆիզիկական կամ հուզական լուրջ վնասներ կրած զոհերին ծաղրելու փորձերը»՝ ներառյալ այնպիսի բովանդակությունը, որը «պարունակում է սադիստական

արտահայտություններ և վաղաժամ մահվան ենթարկվող իրական մարդկանց տեսողական կամ գրավոր պատկերում»: Խորհուրդը նշել է, բայց չի քննարկել Facebook-ի այն բացատրությունը, որ այս քաղաքականությունը կիրառելի չէ այս գործի համար, քանի որ մեմում պատկերված չեն պնդման մեջ ներկայացված իրադարձությունների զոհերը կամ նշված չեն նրանց անունները:

Ատելության խոսքի քաղաքականության «չհրապարակել» բաժնում Facebook-ը նաև արգելում է «Հոլոքոստի մասին տեղեկատվության ժխտումը կամ խեղաթյուրումը»: Խորհուրդը նշել է ընկերության բացատրությունը, որ այս քաղաքականությունը չի տարածվում Հայոց ցեղասպանության կամ այլ ցեղասպանությունների վրա, և որ այդ քաղաքականությունը հիմնված է ընկերության «արտաքին փորձագետների հետ խորհրդակցության, համաշխարհային մակարդակով հակասեմականության արձանագրված աճի և Հոլոքոստի մասին չիմացության տագնապալի մակարդակի վրա»:

8.1.2. «Հայերն ահաբեկիչներ էին և նրանք արժանի էին դրան» պնդման վերլուծություն

Խորհուրդը նշել է, որ Facebook-ը գտել է, որ այս պնդումը խախտում է Ատելության խոսքի համայնքային ստանդարտը: Ատելության խոսքի համայնքային ստանդարտի «չհրապարակել» բաժնում արգելվում է «արժանապատվությունը նսեմացնող խոսքը կամ պատկերավորումը՝ համեմատությունների, ընդհանրացումների կամ ոչ պատշաճ հայտարարությունների ձևով (գրավոր կամ տեսողական)»: Քաղաքականության մեջ ատելության խոսք է համարվում նաև, երբ թիրախային խումբը ներկայացվում է որպես «հանցագործներ»: Խորհուրդը կարծում է, որ «ահաբեկիչներ» տերմինն այս կատեգորիայի մեջ է մտնում:

8.1.3 Մեմի համակցված պնդումների վերլուծություն

Խորհուրդը կարծում է, որ պետք է գնահատել բովանդակությունը որպես ամբողջություն՝ ներառյալ վիճարկման առարկա մեմի պնդումների համադրության ազդեցությունը: «Ամենօրյա պայքար» կամ «երկու կոճակ»

մեմերի ընդհանուր նպատակն է հակադրել երկու տարբեր տարբերակներ՝ դրանց հնարավոր հակասությունները կամ այլ ենթատեքստերը ընդգծելու համար, այլ ոչ թե սատարել ներկայացված տարբերակները:

Մեծամասնության համար ատելության խոսքի քաղաքականության մեջ բացառումը շատ կարևոր է: Այս բացառումը թույլ է տալիս «կիսվել ուրիշի ատելության խոսքը պարունակող բովանդակությամբ՝ այն դատապարտելու կամ իրազեկվածությունը բարձրացնելու համար»: Դրանում նշվում է նաև՝ «մեր քաղաքականությունը մշակված է այնպես, որ խոսքի այս տեսակները տեղ ունենան, բայց մենք պահանջում ենք, որպեսզի մարդիկ հստակ նշեն իրենց մտադրությունը: Եթե մտադրությունը պարզ չէ, մենք կարող ենք հեռացնել բովանդակությունը»: Մեծամասնությունը նշել է, որ բովանդակությունը կարող է ընկնել նաև ընկերության երգիծական բացառության տակ, որը հանրամատչելի չէ:

Գնահատելով բովանդակությունը որպես ամբողջություն՝ մեծամասնությունը գտավ, որ օգտատիրոջ նպատակը պարզ է: Նա կիսվել է մեմով՝ որպես երգիծանք, որպեսզի ուշադրություն հրավիրի Թուրքիայի կառավարության կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտելու ջանքերին և, միևնույն ժամանակ, արդարացնելու նույն պատմական ոճրագործությունները: Օգտատերը նպատակ չուներ ծաղրելու այդ իրադարձությունների զոհերին, ոչ էլ պնդելու, որ այդ զոհերը հանցագործներ են, կամ որ ոճրագործությունն արդարացված է: Մեծամասնությունը հաշվի է առել Թուրքիայի կառավարության դիրքորոշումը 1915 թվականին հայերի ցեղասպանության վերաբերյալ (Թուրքիայի Հանրապետություն, Արտաքին գործերի նախարարություն), ինչպես նաև Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների պատմությունը: Այս համատեքստում նրանք գտել են, որ ծաղրանկարի կերպարի քրտնած դեմքը փոխարինված էր Թուրքիայի դրոշով, և բովանդակության անմիջական հղումը Հայոց ցեղասպանությանը նշանակում էր, որ օգտատերը կիսվում է մեմով՝ քննադատելու համար Թուրքիայի կառավարության դիրքորոշումն այս հարցում: «Մտածող դեմքով» էմոջին, որը սովորաբար սարկազմի համար օգտագործում են մեմերի կողքին, հաստատում է այս եզրակացությունը: Մեծամասնությունը նշել է «PC-10007» հրապարակային մեկնաբանությունը (որը հասանելի է

վերոնշյալ 7-րդ բաժնում), որտեղ ասվում է, որ «այս մեմը, ինչպես նկարագրված է, չի ծաղրում ցեղասպանության զոհերին, այլ ծաղրում է ժամանակակից Թուրքիայում ժխտողականության քաղաքականությունը, որը միաժամանակ պնդում է, որ ցեղասպանություն տեղի չի ունեցել, և որ զոհերն արժանի են դրան»: Այսպիսով, սխալ կլինի հայերին պաշտպանելու անվան տակ հեռացնել այս մեկնաբանությունը, երբ այդ գրառումը քննադատություն է Թուրքիայի կառավարության հասցեին՝ ի աջակցություն հայերի:

Այսպիսով, մեծամասնությունը գտել է, որ, ընդհանուր առմամբ, բովանդակությունն ընկնում է Facebook-ի Ատելության խոսքի համայնքային ստանդարտի քաղաքականության բացառման կատեգորիայի մեջ: Փոքրամասնության կարծիքով, կոնկրետ համատեքստի բացակայության պայմաններում օգտատիրոջ նպատակն այնքան էլ պարզ չէր՝ եզրակացնելու համար, որ նա կիսվել էր ծաղրական բովանդակությամբ՝ Թուրքիայի կառավարությանը քննադատելու համար: Բացի այդ, փոքրամասնության կարծիքով, օգտատերը չի կարողացել ճիշտ ձևակերպել գաղափարը, որը նպատակ ուներ արտահայտել հումորի միջոցով: Քանի որ բովանդակությունը պարունակում է վնասակար ընդհանրացումներ հայերի վերաբերյալ, Խորհրդի անդամների փոքրամասնությունը գտավ, որ այն խախտում է Ատելության խոսքի համայնքային ստանդարտը:

8.2 Facebook-ի արժեքներին համապատասխանություն

Խորհրդի անդամների մեծ մասի կարծիքով այս բովանդակության վերականգնումը համապատասխանում է Facebook-ի արժեքներին: Խորհուրդը ճանաչեց հայկական համայնքի զգայունությունը 1915 թվականին հայերի դեմ իրականացված մասսայական ոճրագործությունների վերաբերյալ հայտարարությունների նկատմամբ, ինչպես նաև համայնքի երկարատև պայքարը՝ ցեղասպանության ճանաչմանն ու այդ ոճրագործությունների դատապարտմանն ուղղված: Այնուամենայնիվ, մեծամասնությունը չի գտել որևէ ապացույց այն բանի, որ մեմն այս դեպքում «Արժանապատվության իրավունքի» և «Անվտանգության իրավունքի» խախտման ռիսկ է առաջ բերում, որոնք կարող են ավելի ծանրակշիռ լինել, քան «Ձայնի իրավունքը»: Մեծամասնությունը նաև

նշել է Facebook-ի «Անվտանգության» հետ կապված լայն անդրադարձը՝ առանց բացատրելու, թե ինչպես է այս արժեքը կիրառվում տվյալ դեպքում:

Փոքրամասնության կարծիքով, չնայած երգիծանքը պետք է պաշտպանված լինի, ինչպես իրավամբ նշում է մեծամասնությունը, սակայն մեկնաբանության մեջ բերված հայտարարությունները ոտնահարում են այն մարդկանց ինքնասիրությունը, որոնց նախնիները ցեղասպանության են ենթարկվել: Փոքրամասնությունը նաև գտել է, որ պնդումները չեն հարգում կոտորածի ենթարկված և դրանից տուժած մարդկանց հիշատակը, և դա կարող է մեծացնել հայերի նկատմամբ խտրականության և բռնության ռիսկը: Դա ավելի ծանրակշիռ փաստարկ է, որպեսզի «Ձայնի իրավունքը» իր տեղը զիջի «Անվտանգության իրավունքին» ու «Արժանապատվության իրավունքին»:

8.3 Facebook-ի մարդու իրավունքների պարտավորություններին համապատասխանությունը

Ազատ արտահայտման իրավունք (ICCPR-ի հոդված 19)

ICCPR-ի Հոդված 19-ի 2-րդ կետով լայն պաշտպանություն է տրամադրվում «բոլոր տեսակի» արտահայտությունների, այդ թվում՝ գրավոր և ոչ բանավոր «քաղաքական դիսկուրսների», ինչպես նաև «մշակութային և գեղարվեստական արտահայտչամիջոցների» համար: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն հստակ նշել է, որ 19-րդ հոդվածի պաշտպանությունը տարածվում է այնպիսի արտահայտությունների վրա, որոնք կարող են համարվել «խիստ վիրավորական» (Ընդհանուր մեկնաբանություն № 34, կետեր՝ 11, 12).

Այս դեպքում Խորհուրդը գտավ, որ երգիծական մեմի տեսքով ծաղրանկարը քաղաքական խնդրի վերաբերյալ դիրքորոշում է՝ Թուրքիայի կառավարության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ: Խորհուրդը նշեց, որ «ծաղրանկարները, որոնք բացահայտում են քաղաքական դիրքորոշումը» և «մեմերը, որոնք ծաղրում են հասարակական գործիչներին», կարող են համարվել գեղարվեստական արտահայտման ձևեր, որոնք պաշտպանված են մարդու իրավունքների միջազգային օրենսդրությամբ (ՄԱԿ-ի Խոսքի ազատության

հարցերով հատուկ զեկուցող, զեկույց A/HRC/44/49/Add.2, կետ 5). Խորհուրդն այնուհետև շեշտեց, որ քաղաքական տիրույթում և պետական հաստատություններում հասարակական գործիչների մասին ICCPR-ով ընդունված ազատ արտահայտվելու արժեքը «հատկապես բարձր է» (Ընդհանուր մեկնաբանությունը № 34, կետ 38).

Խորհուրդը նաև նշեց, որ օրենքները, որոնք ընդհանուր արգելքներ են սահմանում սխալ կարծիքներ արտահայտելու կամ պատմական փաստերը սխալ մեկնաբանելու համար և հաճախ հիմնվում են ատելության խոսքի հղումների վրա, անհամատեղելի են ICCPR-ի 19-րդ հոդվածի հետ, եթե դրանք չեն հրահրում թշնամանք, խտրականություն կամ բռնություն՝ համաձայն ICCPR-ի 20-րդ հոդվածի (Ընդհանուր մեկնաբանություն № 34, կետ 29, Ազատ արտահայտման իրավունքի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող, զեկույց A/74/486, կետ 22).

Թեև ազատ արտահայտման իրավունքը հիմնարար իրավունք է, այն բացարձակ չէ: Այն կարող է սահմանափակվել, բայց սահմանափակումները պետք է համապատասխանեն օրինականության, օրինական նպատակի, անհրաժեշտության և համաչափության պահանջներին (հոդված 19, կետ 3, ICCPR): Facebook-ը պետք է ձգտի կարգավորել ատելության խոսք պարունակող բովանդակությանն առնչվող իր քաղաքականությունն այս սկզբունքներին համապատասխան (ՄԱԿ-ի Խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցող, զեկույց A/74/486, կետ 58(բ)):

I. Օրինականություն

Ազատ արտահայտումը սահմանափակող ցանկացած կանոն պետք է լինի հստակ, ճշգրիտ և հանրության համար հասանելի (Ընդհանուր մեկնաբանություն 34, կետ 25). Անձինք պետք է բավարար տեղեկություններ ունենան, թե ինչու և ինչպես կարող է սահմանափակվել իրենց խոսքը, որպեսզի կարողանան համապատասխան վարք դրսևորել: Facebook-ի համայնքային ստանդարտներով «թույլատրվում է ուրիշի ատելության խոսքը պարունակող բովանդակությունը՝ այն դատապարտելու կամ դրա վերաբերյալ

իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով», սակայն օգտատերերից պահանջվում է «հստակ նշել իրենց մտադրությունը»: Բացի այդ, Խորհուրդը նաև նշել է, որ Facebook-ը ատելության խոսքին առնչվող իր քաղաքականությունից հանել է հումորային նյութերի համար սահմանված բացառության կիրառումը 2020 թ. հուլիսին կայացած Քաղաքացիական իրավունքների աուդիտից հետո: Քանի որ այդ բացառումը հանվել է, ընկերությունը երգիծական նյութերի համար բացառության ավելի նեղ շրջանակ է թողել, որը ներկայումս օգտատերերը չեն կարող տեսնել Ատելության խոսքի համայնքային ստանդարտում:

Խորհուրդը նաև նշել է, որ Facebook-ը սխալ էր տեղեկացրել օգտատիրոջը, որ նա խախտել էր Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտը, այն դեպքում, երբ Facebook-ի գործողությունները հիմնված են եղել Ատելության խոսքի քաղաքականության վրա: Խորհուրդը գտել է, որ օգտատերերի համար այնքան էլ պարզ նշված չէ, որ Դաժան և բիրտ բովանդակության վերաբերյալ համայնքային ստանդարտը տարածվում է միայն այն բովանդակության վրա, որտեղ պատկերված են տուժած զոհերը կամ նշված են նրանց անունները:

Բացի այդ, Խորհուրդը գտել է, որ օգտատերերին պատշաճ կերպով տեղեկացնելը իրենց նկատմամբ կիրառվող հարկադիր գործողությունների պատճառների մասին կօգնի նրանց, որպեսզի պահպանեն Facebook-ի կանոնները: Սա վերաբերում է օրինականության խնդրին, քանի որ բովանդակության հեռացման վերաբերյալ օգտատերերին անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու դեպքում «ստեղծվում է գաղտնի նորմեր կիրառելու տպավորություն, որն անհամատեղելի է հստակ, կոնկրետ և կանխատեսելի նորմեր ունենալու չափանիշներին», ինչը կարող է խոչընդոտել, որպեսզի «անձը կարողանա բովանդակության հետ կապված գործողությունները վիճարկել կամ արձագանքել բովանդակության դեմ բողոքներին»: (ՄԱԿ-ի Խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցող, զեկույց A/HCR/38/35, կետ 58). Հետևաբար, այս դեպքում Facebook-ը օգտատիրոջը ծանուցում ուղարկելու հարցին իր այս մոտեցմամբ խախտել էր օրինականությունը:

II. Օրինական նպատակ

Ազատ արտահայտման ցանկացած սահմանափակում պետք է նաև հետապնդի «օրինական նպատակ»: Խորհուրդը համաձայնեց, որ սահմանափակումը հետապնդում է այլոց իրավունքները պաշտպանելու օրինական նպատակ (Ընդհանուր մեկնաբանություն № 34, կետ 28). Դա ներառում է հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունքները, այդ թվում՝ էթնիկ և ազգային պատկանելության հիմքով (Հոդված 2, կետ 1, ICCPR, հոդվածներ 1 և 2, ICERD):

Խորհուրդը նաև վերահաստատեց 2021-002-FB-UA գործով որոշման իր եզրակացությունը՝ ըստ որի «օրինական նպատակ չէ սահմանափակել ազատ արտահայտումը՝ անձին վիրավորելուց պաշտպանելու միակ նպատակով: (ՄԱԿ-ի Խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցող, զեկույց A/74/486, կետ 24), քանի որ մարդու իրավունքների միջազգային օրենքներում ծանրակշիռ արժեք ունի ազատ արտահայտման իրավունքը (Ընդհանուր մեկնաբանություն № 34, կետ 38).”

III. Անհրաժեշտություն և համաչափություն

Ազատ արտահայտման ցանկացած սահմանափակում «պետք է համապատասխանի այն կիրառելու պաշտպանական ֆունկցիային, այն պետք է ամենաքիչ միջամտող գործիքը լինի՝ պաշտպանական ֆունկցիան իրականացնելու համար, այն պետք է համաչափ լինի պաշտպանության ենթակա շահերին» (Ընդհանուր մեկնաբանություն 34, կետ 34).

Խորհուրդը գնահատել է, թե արդյոք անհրաժեշտ էր բովանդակության հեռացումը՝ հայերի հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունքները պաշտպանելու համար: Խորհուրդը նշել է, որ ներկայումս Թուրքիայում խոսքի ազատությունը բավականին շատ սահմանափակումների է ենթարկվում՝ անհամաչափ ազդեցություն ունենալով երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի վրա: Խոսքի ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը 2016թ. -ին Թուրքիա կատարած իր առաքելության մասին զեկույցում նշել է, որ գրաքննությունը գործում է «ժողովրդավարական կյանքի համար կարևոր նշանակություն

ունեցող բոլոր ոլորտներում՝ ՁԼՄ-ներ, կրթական հաստատություններ, դատական և փաստաբանական մարմիններ, կառավարության բյուրոկրատիա, քաղաքական դաշտ և թվային հսկայական օնլայն տիրույթներ» (ՄԱԿ-ի Խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցող, զեկույց A/HRC/35/22/Add.3, կետ 7). 2019 թ. -ին հրապարակված հաջորդ զեկույցում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշել է, որ իրավիճակը չի բարելավվել (ՄԱԿ-ի Խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցող, զեկույց A/HRC/41/35/Add.2, կետ 26).

Թուրքական իշխանությունները հատուկ թիրախավորել են այն արտահայտությունները, որոնք դատապարտում են 1915 թվականից ի վեր Թուրքիայի Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունները: Համատեղ մեղադրական նամակում ՄԱԿ-ի մի շարք հատուկ դատական գործընթացների հետ կապված նշվում է, որ Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը կարծես նախատեսված է «հատուկ խոչընդոտելու համար ճշմարտության վերհանմանը՝ կապված այն բռնության քաղաքականության հետ, որը տարվում է Թուրքիայի հայ համայնքի նկատմամբ» և «զոհերի նկատմամբ արդարադատության իրականացման և փոխհատուցման իրավունքի պահանջի»: Խորհուրդը նշել է նաև 2007 թ.-ին հայազգի լրագրող Հրանտ Դինքի սպանության մասին, ով մի շարք հոդվածներ էր տպագրել հայկական ծագմամբ Թուրքիայի քաղաքացիների ինքնության վերաբերյալ: Այդ հոդվածներից մեկում Դինքը գրել էր ցեղասպանությունը չճանաչելու փաստի, և թե ինչպես է դա ազդում հայերի ինքնության վրա: Նախկինում Դինքը մեղավոր էր ճանաչվել թուրքական դատարանների կողմից՝ «թուրքական ինքնությունը» նվաստացնող հոդվածներ գրելու համար: 2010 թ.-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրեց, որ Դինքի դատավճիռը և Թուրքիայի իշխանությունների կողմից նրա կյանքի պաշտպանության համար համապատասխան միջոցներ չձեռնարկելը նրա ազատ արտահայտման իրավունքի խախտում է (տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Դինքն ընդդեմ Թուրքիայի*, կետ 139).

Խորհրդի անդամների մեծամասնությունը եզրակացրեց, որ Facebook-ը սխալ է գործել՝ միջամտելով օգտատիրոջ ազատ արտահայտմանը: Մեկնաբանության հեռացումը չէր պաշտպանի հայերի հավասարության և խտրականության

չենթարկվելու իրավունքները: Օգտատերը ոչ թե հավանություն էր տալիս մեմի հակադիր պնդումներին, այլ դրանք վերագրում էր Թուրքիայի կառավարությանը: Նա դա արել էր՝ դատապարտելու և իրազեկելու համար կառավարության հակասական և սեփական շահերը պաշտպանող դիրքորոշումը: Խորհրդի անդամների մեծամասնության կարծիքով, երգիծանքի ազդեցությունը, ինչպես այս մեմինն է, կմեղմանա, եթե մարդիկ հստակ արտահայտեն իրենց մտադրությունը: Այն փաստը, որ «երկու կոճակ» կամ «ամենօրյա պայքար» մեմը սովորաբար հումորային բնույթ ունի, թեև այստեղ լուրջ թեմա էր շոշափվում, նույնպես նպաստեց մեծամասնության որոշմանը:

Մեծամասնությունը նաև նշել է, որ բովանդակությամբ կիսվել են անգլերեն լեզվով ֆեյսբուքյան էջում, որը հետևորդներ է ունեցել տարբեր երկրներում: Թեև Facebook-ի որոշ օգտատերեր կարող էին սխալ մեկնաբանել մեմը, Խորհրդի անդամների մեծամասնությունը գտավ, որ դա չի մեծացնում հայերի խտրականության և բռնության ենթարկվելու ռիսկը, հատկապես որ բովանդակությունն ուղղված էր միջազգային լսարանին: Նրանց կարծիքով այս կարևոր հարցը միջազգային լսարանին ներկայացնելը բխում է հասարակության շահերից:

Բացի այդ, Խորհուրդը գտավ, որ առանց պատճառի ինֆորմացիայի հեռացումը չի կարող համաչափ լինել: Հանրային շահերից բխող խնդրի վերաբերյալ բովանդակության հեռացումը պահանջում է հատկապես ծանրակշիռ պատճառներ՝ համաչափ լինելու համար: Այս առումով, Խորհուրդը մտահոգված էր Facebook-ի բովանդակության մոդերատորների կարողությունների վերաբերյալ՝ ստուգելու այս մեմը և երգիծական բնույթի նմանատիպ այլ բովանդակություն: Մոդերատորները պետք է հետևեն համապատասխան ընթացակարգերի, և նրանց պետք է տրամադրվի ժամանակ, ռեսուրսներ և աջակցություն՝ երգիծական բովանդակությունն ու համապատասխան ենթատեքստը ճիշտ գնահատելու համար:

Համաձայն լինելով հարթակում երգիծանքը պաշտպանելու Խորհրդի անդամների մեծամասնության տեսակետի հետ՝ Խորհրդի անդամների փոքրամասնությունը չէր գտնում, որ բովանդակությունը հումորային է:

Փոքրամասնության կարծիքով, օգտատերը կարող էր ընդունել մեմում տեղ գտած պնդումները և այդպիսով խտրականություն դրսևորել հայերի նկատմամբ: Հետևաբար, փոքրամասնության կարծիքով՝ այս դեպքում անհրաժեշտության և համաչափության պահանջները բավարարվել են: 2021-002-FB-UA գործով որոշման մեջ Խորհուրդը ուշադրության է արժանացրել Facebook-ի այն դիրքորոշումը, ըստ որի սև դեմք պատկերող բովանդակությունը կհեռացվի, եթե օգտատերը հստակ չնշի այդ քաղաքականությունը դատապարտելու կամ դրա վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու իր մտադրությունը: Փոքրամասնությունը գտավ, որ նույն կերպ, եթե բովանդակության երգիծական բնույթը պարզ չէ, ինչպես այս դեպքում, օգտատիրոջ մտադրությունը պետք է հստակ երևա: Փոքրամասնությունը եզրակացրեց, որ թեև երգիծանքը երկիմաստ է, այն չպետք է երկիմաստ լինի քննադատության թիրախի համար, այսինքն՝ Թուրքիայի կառավարության կամ հայ ժողովրդի:

Տեղեկացված լինելու իրավունք (Հոդված 14, կետ 3(a), ICCPR)

Խորհուրդը գտել է, որ օգտատիրոջը սխալ ծանուցում ուղարկելով՝ տվյալ բովանդակության համար սահմանված կանոնը խախտելու համար, տեղեկացված լինելու իրավունքի սահմանափակում է՝ արդարադատության հասնելու համատեքստում (Հոդված 14, կետ 3(a) ICCPR): Օգտատիրոջ ազատ արտահայտման իրավունքը սահմանափակելիս Facebook-ը պետք է հետևի պատշաճ իրավական ընթացակարգին և օգտատիրոջը ճիշտ տեղեկացնի իր որոշման հիմքի մասին, այդ թվում՝ վերանայելով ծանուցումը՝ պատճառի փոփոխման դեպքում (Ընդհանուր մեկնաբանություն № 32, կետ 31). Այս դեպքում Facebook-ը չի կատարել այդ պարտավորությունը:

9. Վերստուգիչ խորհրդի որոշումը

Վերստուգիչ խորհուրդը չեղյալ է համարում բովանդակությունը հեռացնելու Facebook-ի որոշումը և պահանջում է, որ բովանդակությունը վերականգնվի:

10. Քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն

Հետևյալ առաջարկությունները համարակալված են, և Խորհուրդը խնդրում է, որպեսզի Facebook-ը յուրաքանչյուրի համար առանձին պատասխան ներկայացնի, այն ձևով, ինչպես դրանք ձևակերպված են.

Օգտատերերին հստակ և ճշգրիտ ծանուցում տրամադրել

Օգտատերերի համար իր քաղաքականությունն ու դրա կիրարկումն ավելի պարզ դարձնելու համար Facebook-ը պետք է.

1. Տեխնիկական միջոցներ ձեռք առնի՝ ապահովելու համար, որպեսի օգտատերերին ուղղված ծանուցումը հղում կատարի ընկերության կողմից կիրառվող Համայնքային ստանդարտին: Եթե Facebook-ը որոշում է, որ (i) բովանդակությունը չի խախտում օգտատիրոջը ծանուցված Համայնքային ստանդարտը, և (ii) որ բովանդակությունը խախտում է Համայնքային այլ ստանդարտ, ապա օգտատերը պետք է պատշաճ կերպով տեղեկացվի այդ մասին և բողոքարկման մեկ այլ հնարավորություն ստանա: Նա միշտ պետք է ունենա ճիշտ ինֆորմացիայի հասանելիություն՝ նախքան Խորհրդին դիմելը:
2. Ներառի երգիծական բովանդակության համար սահմանված բացառությունը, որը ներկայումս տեսանելի չէ օգտատերերին՝ Ատելության խոսքի վերաբերյալ համայնքային ստանդարտի հանրամատչելի լեզվով բացատրությամբ:

Ունենալ համապատասխան գործիքներ՝ երգիծական բովանդակության հետ կապված խնդիրները լուծելու համար

Ի նպաստ օգտատերերի իր բովանդակության քաղաքականության կիրառման ճշգրտությունը բարելավելու համար Facebook-ը պետք է.

3. Համոզված լինի, որ ունի համապատասխան ընթացակարգեր՝ երգիծական բովանդակությունն ու համապատասխան ենթատեքստը պատշաճ կերպով գնահատելու համար: Սա ներառում է բովանդակության մոդերատորներին հետևյալով ապահովումը՝ (i) հասանելիություն Facebook-ի տեղական աշխատանքային խմբերին՝

համապատասխան մշակութային և պատմական տեղեկատվություն հավաքելու համար, և (ii) բավարար ժամանակ՝ Facebook-ի տեղական աշխատանքային խմբերի հետ խորհրդակցելու և գնահատական տալու համար: Facebook-ը բովանդակության մոդերատորների համար պետք է այնպիսի քաղաքականություն մշակի, որը կխթանի նրանց կողմից բովանդակության ավելի խորը քննությունը կամ ուսումնասիրությունը, եթե բովանդակության մոդերատորը վստահ չէ՝ արդյոք մեմը երգիծական է, թե ոչ:

Հնարավորություն տալ օգտատերերին հայտնելու, որ իրենց բովանդակությունն ընկնում է քաղաքականությամբ սահմանված բացառությունների մեջ

Բողոքարկման փուլում Facebook-ի որոշման վերանայման ճշգրտությունը բարելավելու համար ընկերությունը պետք է.

4. Թույլ տալ օգտատերերին իրենց բողոքարկման մեջ նշել, որ իրենց բովանդակությունն ընկնում է Ատելության խոսքի վերաբերյալ քաղաքականության բացառություններից մեկի մեջ: Սա ներառում է երգիծական բովանդակության բացառությունները և, երբ օգտատերերը կիսվում են ատելություն պարունակող բովանդակությամբ՝ այն դատապարտելու կամ իրազեկվածությունը բարձրացնելու համար:
5. Ապահովի, որպեսզի բացառման քաղաքականության վրա հիմնված բողոքարկումներին առաջնահերթություն տրվի՝ դրանք վերանայելու համար:

***Ընթացակարգի վերաբերյալ նշում**.

Վերստուգիչ խորհրդի որոշումները կազմվում են հինգ անդամներից բաղկացած կոլեգիալ մարմնի կողմից և պետք է հաստատվեն Խորհրդի անդամների մեծամասնության կողմից: Խորհրդի որոշումները կարող են չարտահայտել Անդամների անձնական տեսակետը:

Այս գործի վերաբերյալ որոշում կայացնելու համար Խորհրդի կողմից պատվիրվել է անկախ հետազոտություն: Անկախ հետազոտական ինստիտուտը, որի կենտրոնը Գոթենբուրգի համալսարանն է, կազմված վեց մայրցամաքներում տեղակայված ավելի քան 50 սոցիալական գիտությունների գիտնականների, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրների ավելի քան 3200 փորձագետների թիմից, փորձաքննություն է իրականացրել սոցիալ-քաղաքական և մշակութային համատեքստում: Lionbridge Technologies LLC. ընկերությունը, որի մասնագետները լավ տիրապետում են ավելի քան 350 լեզուների և աշխատում են աշխարհի 5000 քաղաքներից, լեզվաբանական փորձաքննություն է տրամադրել: